

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎԱՅՓՅԱՆ ՆԵԼԼԻ ԴԱՎԻԹԻ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ
ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ**

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ОВСЕПЯН НЕЛЛИ ДАВИДОВНА**

**ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВА И ПРАВА В ПОЛИТИКО-ПРАВОВЫХ УЧЕНИЯХ
АРМЯНСКИХ МЫСЛИТЕЛЕЙ XIX ВЕКА**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ.Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր **Ն.Գ. Սուքիասյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Լ.Մ.Մալխասյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թվականի դեկտեմբերի 21-ին ժ. 15⁰⁰-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2022 թվականի նոյեմբերի 10 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Զ.Հ.Հայրապետյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու



Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Г.Г.**

Официальные оппоненты: доктор юридических наук **Сукиасян Н. Г.**

кандидат юридических наук, **Малхасян Л.М.**

Ведущая организация: **Академия образовательского комплекса Полиции РА**

Защита состоится 21 декабря 2022 г. 15⁰⁰ часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 10 ноября 2022 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук



Дж. А. Айрапетян

Աշխատանքի ընդհանուր բովանդակությունը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անցյալում կուտակված փորձին ու գիտելիքներին, ազգային ավանդույթներին, ինչպես նաև քաղաքական-իրավական մտքի հայ դասականներին դիմելը բոլոր ժամանակներում եղել և մնում է ազգի հոգևոր կեցության ինքնաճանաչման, ինքնաբացահայտման և ինքնահաստատման կարևոր ձևերից մեկը: Պատմական անցյալի իրավական մշակույթին, ներառյալ իրավական մտքին անդրադարձը նպաստավոր գործոն է ազգային արժեհամակարգը անաղարտ պահելու և այն ժամանակին համահունչ զարգացնելու համար:

Պատմական յուրաքանչյուր մեծ առաջընթաց զուգակցվում է անցյալին վերադառնալու, անցյալի արժեքները վերագնահատելու փոխկապվածության մեջ: Անցյալն իր այս կամ այն կողմով՝ կապված է պատմական կոնկրետ առաջընթացի հետ, որոշ իմաստով արդիականանում է: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր պատմական փորձը, իր ազգային առաջավոր ավանդույթները, իրեն բնորոշ կողմերը, որոնց վերհանումը անհրաժեշտ է ազգային իրավական մշակույթի, և ընդհանրապես պատմության ամբողջական ըմբռման համար: Առհասարակ ազգի ինքնազարգացման խնդրի տեսանկյունից արդիական է նրա անցյալի ցանկացած հարցի օբյեկտիվ և անաչառ վերլուծությունն ու արժևորումը: Այսօր, երբ հայ ժողովրդի առջև դեռևս ծանրացած է Արցախի հարցի արդարացի կարգավորման և հայոց պետականության անվտանգության ապահովման խնդիրները, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում անցյալի հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի ուսումնասիրությունը: Այս առումով գտնում ենք, որ անցյալի փորձի խորը, անաչառ ուսումնասիրությունը թույլ կտա գտնել այսօրվա ծառայած հարցերի լուծման ճշմարիտ ճանապարհը:

Այսպիսով, արդի ժամանակաշրջանի խնդիրների լուծման համար կարող է նպաստել նաև հայ քաղաքական և իրավական մտքի պատմության էջերի բազմակողմանի, օբյեկտիվ, անաչառ ուսումնասիրության միջոցով: Որպես

հետազոտման ժամանակաշրջան ընտրվել է XIX դարը, քանի որ այն, թե՛ համաշխարհային, թե՛ հայ ժողովրդի պատմության համար բուռն իրադարձությունների ժամանակաշրջան էր: Համաշխարհային պատմության մեջ այն սոցիալ-տնտեսական իմաստով բնութագրվում է նոր հասարակական համակարգի՝ կապիտալիզմի վերջնական ամրապնդմամբ, որը, լինելով առաջադիմական ավատատիրության նկատմամբ՝ շուտով երևան հանեց նաև իր քողարկված թերությունները: Մարդկությունը դուրս էր գալիս սահմանափակ գաղափարական, կրոնական, իդեալիստական կապանքների, սնոտիապաշտական ըմբռնումների, երեսպաշտական կարգախոսների շրջանակներից և կյանքին սկսում էր նայել սթափ ու իրատեսական հայացքով:

XIX դարում կյանքի են կոչվում այնպիսի ինստիտուտներ, որոնք թույլ են տալիս քաղաքական գործընթացի մեջ ընդգրկել բնակչության գրեթե բոլոր խավերին: Հասարակական-քաղաքական գործընթացներում առանցքային է դառնում մարդը, ամրապնդվում և հիմնավորվում է գիտակցումը մարդու իրավունքների ընդլայնման, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի համար, ինքնավար կեցությունը և բանականությունը հայտարարվում են բարձրագույն արժեքներ:

Վետևաբար, XIX դարի հայ քաղաքական, իրավական մտքի բազմակողմանի ուսումնասիրությունը թույլ կտա վեր հանել հայ քաղաքական իրավական մտքի զարգացման առանձնահատկությունները, գտնել պատասխաններ հետագա շրջանի և արդի հայ իրավական մտքին հուզող շատ հարցերի: Հենց նման արդիականությամբ է պայմանավորված թեմայի ընտրությունը և դրա գիտական հետազոտությունը:

Թեմայի գիտական հետազոտության վիճակը: Հայտնի է, որ XIX դարի հայ փիլիսոփայական, հասարակական և իրավական միտքն անցյալ տասնամյակներում ուսումնասիրվել են ամենատարբեր կողմերով: Ստեղծվել են արժեքավոր մենագրություններ, ուսումնասիրություններ, պաշտպանվել են ատենախոսություններ: Այս բնագավառում մեծ ներդրում են կատարել Ա.

Հովհաննիսյանը, Հ. Գաբրիելյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. Կարապետյանը, Ա. Թևոսյանը, Է. Հարությունյանը, Է. Ռշտունին, Հ. Շաքարյանը, Հ. Հակոբյանը, Ա. Սարգսյանը, Ս. Հարությունյանը, Ռ. Միրումյանը, Լ.Սարվազյանը և ուրիշներ: Հնարավորության սահմաններում ուսումնասիրվել են այդ շրջանի նշանավոր մտածողների իրավական, փիլիսոփայական, հասարակագիտական, տրամաբանական, կրոնագիտական հայացքները:

Ինդրո առարկայի շրջանակներում իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհ. Հովսեփյանը հետազոտել է XIX դարի վերջին և XX դարի սկզբի հայ քաղաքական և իրավական մտքի պատմության հեղափոխական-դեմոկրատական և մարքսիստական հոսանքների մտածողներ՝ Մ. Նալբանդյանի, Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Արշ. Մելիքյանի, Ս. Կասյանի քաղաքական և իրավական հայացքները: Ժամանակաշրջանի առանձին մտածողների քաղաքական իրավական հայացքներին են անդրադարձել Կ. Խ. Գույումջյանը (ուսումնասիրել է Ն. Ռուսինյանի իրավական հայացքները), Մ. Թելունցը (Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանի, Հ. Սվաճյանի, Մ. Մամուրյանի իրավաքաղաքական հայացքները), Ա.Մ. Թևոսյանը (Ռ. Պերպերյանի իրավաքաղաքական հայացքները) և այլք:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ հեղինակների ուսումնասիրությունները, այդուհանդերձ գտնում ենք, որ առ այսօր XIX դարի հայ նշանավոր մտածողների իրավաքաղաքական հայացքների հետազոտությունը դրվագային և հատվածային է եղել, ուստի կարիք ունի համակարգված ու ամբողջական ուսումնասիրության:

Հետազոտության նպատակն և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է համակողմանի և համալիր վերլուծության ենթարկել XIX դարի հայ իրավաքաղաքական միտքը: Սույն ատենախոսությամբ առաջին անգամ փորձ է կատարվում մեկ հետազոտության սահմաններում ներառել քննարկվող ժամանակաշրջանի արևմտահայ ու արևելահայ ականավոր մտածողների և գործիչների հայացքները՝ պետության առաջացման, դրա էության,

կառավարման ձևերի, բնական և դրական իրավունքի, դրանց էության ու տարբերությունների և այլ հարցերի մասին:

Վերոնշյալ հիմնական նպատակը կոնկրետացվել է հետևյալ հետազոտական **խնդիրներում**.

ա) XIX դարում Հայաստանի և հայ ժողովրդի հասարակական-քաղաքական դրության և պատմական պայմանների համատեքստում վերհանել հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի հիմնական ուղղությունները (հոսանքները), դրանց ձևավորման պատմական պայմանները,

բ) վերլուծել մինչ օրս իրավագիտության, քաղաքագիտության մեջ վեճի առարկա հանդիսացող «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ը, բացահայտել դրա որպես հիմնական օրենքի բնույթը, ազդեցությունն արևմտահայ սահմանադրական մտքի ձևավորման և զարգացման վրա,

գ) պարզել XIX դարում հայ իրավական մտքի պատմագրության, հայ իրավունքի պատմության ձևավորման նախադրյալները, առանձնահատկությունները և արժևորել Վահան Բաստամյանցի՝ հայեցակարգը և նրա ներդրումը հայ իրավական աղբյուրների քննական տեքստերի հրատարակման գործում,

դ) վերլուծել հայ աշխարհիկ պետականագիտության ձևավորման առանձնահատկությունները և բացահայտել հայ մտածողների հայեցակարգային մոտեցումները պետության առաջացման, պետականության կառուցվածքի և ձևի այլ հիմնահարցերի վերաբերյալ գաղափարները.

ե) XIX դարի հայ առանձին մտածողների ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության միջոցով լուսաբանել նրանց հայացքներն իրավունքի տեսության հիմնական հարցերի և հասարակության հրատապ իրավական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գիտական նորույթը: Հայագիտության մեջ հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ և ատենախոսություններ, որոնք նվիրվել են տարբեր ժամանակաշրջանների կոնկրետ հայ մտածողների իրավաքաղաքական հայացքներին կամ իրավաքաղաքական մտքի այս կամ այն հոսանքի

առանձնահատկություններին: Սակայն քննարկվող ժամանակաշրջանի պետաիրավական միտքը համալիր և ամբողջական ուսումնասիրությամբ չի ներկայացված: Ընդ որում բացի XIX դարի հայ մտածողների աշխատություններից, վեր են հանվել և վերլուծվել նաև հայաբնակ վայրերում լույս ընծայված հայ ամսագրերում և թերթերում հրատարակված պետաիրավական բովանդակությամբ հոդվածները:

Սույն ատենախոսությամբ առաջին անգամ փորձ է արվում պատմականության սկզբունքի և իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ համալիր և համակողմանի ուսումնասիրության ենթարկել XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական հայացքները պետական և իրավական խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Ատենախոսության հետազոտական շրջանակի մեջ ներառված են ինչպես XIX դարի հանրահայտ, այնպես էլ ոչ այնքան հայտնի բոլոր այն մտածողները, որոնք այս կամ այլ կերպ անդրադարձել են պետության և իրավունքի առաջացման, դրանց էության, բնական և դրական իրավունքի, պետության կառավարման ձևերի և այլ հարակից հարցերին:

Սույն հետազոտությունը ամփոփում և ամբողջականացնում է XIX դարի հայ իրավաքաղաքական միտքը, դրանում արտացոլված հայեցակարգային մոտեցումները ունեն ոչ միայն տեսական-ճանաչողական նշանակություն, այլև գործնական հնչեղություն՝ արդի մարտահրավերներին համարժեք լուծումներ գտնելու իմաստով:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. XIX դարը հայ ժողովրդի կյանքում զարթոնքի և ազգային ինքնագիտակցության զարգացման, լուսավորության, մշակույթի ու գիտության վերելքի, ավատական և կրոնախղճախոսական գաղափարախոսության դեմ մղված պայքարի, նոր աշխարհընկալման և իրավաբանական մտածողության ձևավորման դարաշրջան էր: Բարդ պատմաքաղաքական իրավիճակում, այնուամենայնիվ հայ առաջադեմ մտածողներին հաջողվել է ստեղծել պետաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ ամբողջական տեսական ուսմունքներ, որոնք հիմք

են հանդիսացել հայ իրավական մտքի հետագա զարգացման, իսկ հաջորդ դարասկզբի առաջին տասնամյակների համար հայեցակարգային ուսմունքների նախադրյալներ անկախ պետության առաջացման համար:

2. Հետազոտության առարկայի շրջանակում ներառված մտածողներից ոչ մեկը չուներ իրավագիտական կրթություն, սակայն, բոլորն էլ քաջ գիտակցելով պետության և իրավունքի նշանակությունը, իրենց հողվածներում, աշխատություններում անդրադարձել են պետաիրավական երևույթների և ինստիտուտների առաջացման, դրանց էության հարցերին, հույս փափագելով, որ, թե հեղափոխության, թե խաղաղ ճանապարհով հայ ժողովուրդը ձեռք կբերի երկար սպասված անկախությունը, պետականությունը: Այդ հույսերը դրդեցին հայ երիտասարդության մեջ իրավագիտական կրթության տարածմանը, ինչը իրավագիտական ու կադրային նախադրյալ հանդիսացավ Հայաստանի առաջին հանրապետության պետականաշինության գործում:

3. Հայ պետաիրավական միտքը ձևավորվել և զարգացել է երկու մեթոդաբանական ուղղությամբ՝ իդեալիզմի և մատերիալիզմի: Հայ հեղինակները, տուրք տալով այս երկու մտածողական և հետազոտական ուղղություններից որևէ մեկին, լինելով եվրոպական կամ ռուսական մտածողների հայացքների, տեսությունների ազդեցության տակ, այնուամենայնիվ չեն կատարել եվրոպական և ռուսական պետական-իրավական մտքի հասարակ ընդօրինակում-պատճենահանում, այլ յուրաքանչյուրը փորձել է մշակել, ձևավորել իրեն բնորոշ պետաիրավական աշխարհայացքն ու մոտեցումները, և դրանով իսկ իր ուրույն տեղը գրավել հայ պետաիրավական մտքի զարգացման պատմության մեջ:

4. «Ազգային սահմանադրություն» կամ «Ազգային կանոնադրություն» հասկացությունների իրավահամեմատական և քննական վերլուծության արդյունքում բացահայտվել է դրանց բովանդակային-առարկայական տարբերությունները և առանձնահատկությունները, անաչառորեն վերականգնվել է պատմական երևույթների իրական իրավական պատկերը՝ հիմնավորելով, որ այդ փաստաթուղթը մշակված լինելով եվրոպական սահմանադրական մտքի

ազդեցությամբ, այնուամենայնիվ, իրավական տեսանկյունից հայոց ինքսկառավարման սահմանադրական կանոնադրություն և արևմտահայերի հիմնական օրենքն էր:

5. Հայոց պետականության բացակայության պայմաններում, հետազոտության շրջանակում ներառված հայ մտածողները չեն սահմանափակվել զուտ իրավաքաղաքական հարցերով, քննարկման առարկա են դարձրել ազգային հասարակական-քաղաքական տարաբնույթ հարցեր, շարունակելով իրենց նախնիների «սուրբ գործը», իրենց ձայնն են բարձրացրել հայ ժողովրդի ազատագրական ոգին բարձրացնելու, անկախ պետականության գաղափարը և ազատական հայացքները տարածելու համար:

6. XIX դարի հայ իրավական միտքը քննարկել է իրավական այնպիսի տեսական հարցեր, ինչպիսիք են բնական և դրական իրավունքի հարաբերակցությունը, դրական իրավունքի առաջացումը, հասկացությունը, դրական իրավունքի ներհամակարգային տարրերը, ընտրական իրավունքի, միջազգային իրավունքի էության, բովանդակության, դրա համակարգի, աղբյուրների և այլ իրավական երևույթների իմաստավորման ու պարզաբանման վերաբերյալ:

Հայ մտածողները, ամենևին էլ չժխտելով Աստծո գոյությունը, այնուամենայնիվ, անփոփոխ աստվածային կեցության զուգահեռ հայ իրականության մեջ սկսեցին տարածել անփոփոխ բնական իրավունքի առաջավոր գաղափարները: Հայ մտածողների մեծ մասը դեիզմի դիրքերից պաշտպանել և զարգացրել են բնական իրավունքի տեսությունը: Ընդ որում բնական և իրավաբանական իրավունքի գաղափարը անբաժանելի է պարտքի, սոցիալական պատասխանատվության գաղափարից. մարդկանց կողմից միմյանց իրավունքների ճանաչումը միաժամանակ այլ բան չի նշանակում, եթե ոչ իրար նկատմամբ փոխադարձ պարտականությունների ճանաչում և հարգում:

7. XIX դարի հայ մտածողները իրենց անուրանալի ներդրումն ունեն համաշխարհային իրավական մտքի զարգացման մեջ, հատկապես՝ ընտրական,

կրթական, սոցիալական իրավունքի տեսության ոլորտում: Արևմտահայության սահմանադրական- կանոնադրության նորմերով ընտրություններն ընդհանուր էին, հավասար, ուղղակի և գաղտնի: Անհրաժեշտ է նկատել, որ կանոնադրությամբ կանայք ունեցել են ընտրական իրավունքներ, այն դեպքում, երբ ժամանակակից ժողովրդավարական մի շարք պետություններում (օրինակ՝ ԱՄՆ) կանանց ընտրական իրավունքը ճանաչվել է XX դարի 70-ական թվականներին: Դրանով հայ իրականությունը և իրավական միտքը մի քանի տասնամյակով առաջ էր իր ժամանակաշրջանի տեսական մտքից ու պրակտիկայից:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Ելնելով ատենախոսության թեմայի առանձնահատկություններից և նպատակներից՝ կիրառվել են հետազոտության, ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, պատմական), այնպես էլ մասնավոր կամ հատուկ (իրավահամեմատական, վերլուծական-տրամաբանական, վիճակագրական) մեթոդները: Դրանց համալիր կիրառումը նպատակ է հետապնդել ապահովել հետազոտության և, առանձին վերցրած, դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

Հետազոտության աղբյուրագիտական և տեսական հենքը: Հետազոտության աղբյուրագիտական հիմք են հետազոտության առարկայի շրջանակում ներառված մտածողների աշխատությունները, հայաբնակ վայրերում լույս ընծայված հայ ամսագրերի և թերթերի («Հյուսիսափայլ», «Արևելք», «Արևմուտք», «Արևելյան մամուլ», «Փորձ», «Մուրճ», «Նոր-դար», «Բազմավեպ», «Էջմիածին», «Մասիս», «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Հայրենիք», «Մեղու» և այլն) հատկապես խմբագրական հոդվածները նվիրված պետության և իրավունքի առաջացման, դրանց էության, ինչպես նաև բնական, դրական և միջազգային իրավունքի հարցերին:

Հետազոտության տեսական հիմքն են հայրենական քաղաքական-իրավական մտքի պատմության հիմնահարցերով զբաղվող հեղինակների աշխատությունները: Հետազոտվող հիմնահարցերի լուսաբանման գործում

նշանակելի դեր են կատարել Ա. Հովհաննիսյանի, Հ. Գաբրիելյանի, Է. Հարությունյանի, Հ. Շաքարյանի, Հ. Հակոբյանի, Ս. Սարգսյանի, Ս. Հարությունյանի, Ռ. Միրումյանի, Մ. Թելունցի, Լ.Սարվազյանի և այլոց աշխատությունները: Տեսական աղբյուրների շարքը համալրված է նաև իրավագիտության, պատմության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և քաղաքագիտության ոլորտների տարբեր հեղինակների գիտական աշխատանքներով:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող է օգտագործվել որպես ուսումնական ձեռնարկ իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար, ինչպես նաև որպես «Հայ քաղաքական-իրավական մտքի պատմություն» առարկայի ուսումնասիրության համար որպես նախապատրաստման աղբյուր: Ատենախոսությունը կարևոր նշանակություն ունի նաև այն առումով, որ սույն աշխատության մեջ լուսաբանվում են այնպիսի արևմտահայ և արևելահայ մտածողների հայացքները, որոնց ոչ այդքան հաճախ են անդրադարձել կամ անդրադառնում է Հայաստանի պետության և իրավունքի և իրավաքաղաքական մտքի պատմության հարցերի ուսումնասիրման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ և քննարկվել ու երաշխավորվել է ատենախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի կողմից հրատարակված մի շարք գիտական հոդվածներում և մենագրություններում:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, 11 ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: **Աշխատանքի առաջին գլուխը՝ «XIX դարի հայ իրավաբաղաքական մտքի ձևավորման պատմական նախադրյալները, առանձնահատկությունները և հիմնական հոսանքները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Հայաստանի և հայ ժողովրդի հասարակական-քաղաքական դրությունը XIX դարում»** վերնագրով, աշխատանքում հանգամանորեն քննարկվում է Հայաստանի քաղաքական դրությունը տարածաշրջանում և հայ ժողովրդի հասարակական կարգն ու սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի հիմնական ուղղությունները (հոսանքները) հայ իրավական մշակույթի համատեքստում»** վերնագրով, համակողմանի վերլուծության է ենթարկվում XIX դարի հայ հասարակական-քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական հոսանքների՝ կղերաաղայական (կղերամիրական), ազգային պահպանողական, լիբերալ բուրժուական, հեղափոխական-դեմոկրատական հոսանքների բովանդակային առանձնահատկությունները՝ ազգային ճակատագրի, պետականության վերականգնման և իրավունքի վերաբերյալ:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Հայ սահմանադրական և պատմաիրավական միտքը XIX դարում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Արևմտյան սահմանադրական միտքը (1860թ. Սահմանադրությունը)»** վերնագրով, համակողմանի քննարկվում է

արևմտահայերի 1860թ. Սահմանադրության (կանոնադրության) իրավաբանական բովանդակությունը և հեղինակը եզրակացնում է, որ իրավաքաղաքական այդ փաստաթուղթը կոչված էր պաշտպանող արևմտահայերի ինքնավարության և համայքի անդամների նվազագույն իրավունքները, ինչպես նաև այդ Սահմանադրությամբ հիմք դրվեց XIX դարի հայ սահմանադրական ուսմունքի զարգացմանը:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Վահան Բաստամյանցը որպես հայ իրավական մտքի և հայ իրավունքի պատմության գիտական հայեցակարգի հիմնադիր»** վերնագրով, բացահայտվում է վարդապետ Վահան Բաստամյանցի իրավական ուսմունքի բովանդակության էական կողմերը և հիմնավորվում է այն տեսակետը, որ Վահան Բաստամյանցը գիտական հիմքերի վար դրեց հայ իրավունքի և իրավական մտքի հետազոտությունը՝ որպես ինքնուրույն գիտակարգ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Հայ աշխարհիկ պետականագիտության ձևավորումը և հայ մտածողների հայեցակարգային մոտեցումները պետության էության և բովանդակության վերաբերյալ»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Հայ մտածողները պետության առաջացման և պատմական զարգացման առանձնահատկությունների մասին»** վերնագրով, հեղինակը գտնում է, որ պետության առաջացման և նրա էության վերաբերյալ հայ մտածողների հայացքները դիտարկում էին աստվածաբանական, պայմանագրային և բռնության հայեցակարգերի տեսանկյունից:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հայ մտածողների հայացքները պետության կառավարման ձևի, պետական իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման հիմնահարցերի վերաբերյալ»** վերնագրով, աշխատանքում հանգամանորեն քննարկվում է հայ մտածողների դիրքորոշումները ապագա հայոց պետականության կառավարման ձևի, պետական իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման հարցերի վերաբերյալ: Հայ

մտածողները, ընդհանուր առմամբ, հաշվի առնելով պատմության դասերը և եվրոպական երկրների կարգերը, գտնում էին, որ կառավարման ընդունելի ձևեր կարող են լինել սահմանափակ միապետությունը կամ հանրապետական կարգերը, իսկ կենտրոնական իշխանությունը պետք է միասնական (բայց ոչ բացարձակ) լինի, իսկ տեղերում (մարզերում, գավառներում, շրջաններում) ապակենտրոնացված:

Աշխատանքի չորրորդ գլուխը՝ «**XIX դարի հայ մտածողների իրավական հայացքներն իրավունքի տեսության հիմնական հարցերի և հասարակության հրատապ իրավական հիմնախնդիրների վերաբերյալ**» վերնագրով, բաղկացած է չորս ենթագլխից, որոնցում հանգամանորեն լուսաբանվում են՝ քաղաքական անկախության բացակայության պայմաններում հայ իրավագիտության և հայոց իրավագիտակցության ձևավորման և զարգացման անհրաժեշտության հիմնավորման, բնական և պոզիտիվ (դրական) իրավունքների էության ու բովանդակության, միջազգային իրավունքի էության, համակարգի, աղբյուրների, հիմնական ինստիտուտների վերաբերյալ հայ մտածողների առաջադեմ հայացքները և հայեցակարգային մոտեցումները:

Քաղաքական իշխանության և հայոց պետականության բացակայության պայմաններում XIX դարի հայ մտածողների գաղափարները իշխանության, պետական կառուցվածքի, կառավարման ձևի, ժողովրդաիշխանության, իրավունքի և ազատության վերաբերյալ կրում էին ազգային ավանդույթներից բխող ուրույն և ժամանակի համար առաջադեմ հայացքներ, գաղափարներ, որոնց ձևավորման ու զարգացման վրա էական ազդեցություն են գործել նաև ժամանակաշրջանի եվրոպական լուսավորական ուսմունքները և քաղաքական-իրավական հայեցակարգերը:

Եզրակացություններ

1. XIX դարի հայ մտածողներին միավորում էր այն գաղափարը, որ ոչ մի ժողովուրդ չի կարող իր կյանքի և գործունեության ընթացքում հասնել լուսավորության, եթե ազատ չէ քաղաքականապես: Նրանք ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը տեսնում էին ազգային ինքնուրույն պետականություն

ստեղծելու մեջ, որովհետև պետությունը քաղաքակրթության զարգացման խոշոր ազգակ է: Ինչպես արդարացի նշել է Պալասանյանը. «ցեղերի բաժանված», քաղաքականապես բզկտված ոչ մի ժողովուրդ չի կարող մի ամբողջական քաղաքակրթություն ստեղծել:

2. XIX դարի մի շարք հայ մտածողներն իրենց իրավական հայացքները շարադրել են ոչ միայն այլ երկրների մտածողների գաղափարական ազդեցությամբ, այլև հայ իրավական մտքի պատմության մեջ դարերի ընթացքում ստեղծված ուսմունքների և տեսակետների քննական վերլուծություն հիման վրա: Նրանցից՝ Մ. Աղաչրաղյանը, Գր. Արծրունին, Ա. Բագրատունին, Վ. Բաստամյանը, Մ. Գարագաշյանը, Մ. Մամուրյանը, Ստ. Նազարյանը, Ն. Ռուսինյանը, Յ. Ունճիանը, Ն. Սվաճյանը, Հ. Չամուռճյան-Տերոնենցը, Գր. Փեշտիմալճյանը պետաիրավական համակարգի առաջացման հարցը լուծում էին իդեալիստական, իսկ Մ. Նալբանդյանը, Գ. Ղարաջյանը և մյուսները՝ մատերալիստական տեսության տեսանկյունից: Հայ մի շարք մտածողների՝ Աբովյանի, Նալբանդյանի, Փեշտիմալճյանի, Տատյանի, Գարագաշյանի և այլոց հակաավատական, հակակղերական գաղափարներն այնպիսի տարածում էին գտել հայ իրականության մեջ, որ հայոց պատրիարքը արգելել էր այդ մտածողների գրքերի հրատարակումը, տարածումը և ուսումնասիրումը:

3. Եթե Աբովյանը, Փեշտիմալճյանը, Բագրատունին գտնվելով Ժ.-Ժ. Ռուսոյի տեսության ազդեցության ներքո, պաշտպանում էին բնական իրավունքի առաջադեմ գաղափարները, դրանով իսկ հանդես գալով ավատական իրավակարգի դեմ, ապա Տերոնենց-Չամուռճյանը 1829 թ. թարգմանելով Ժ.-Ժ. Ռուսոյի «Հասարակական պայմանագիր» աշխատությունը, ցանկանում էր ցույց տալ հեղինակի հայացքների տրամաբանական հակասությունները և դրանով իսկ մեկուսացնելով հայ ընթերցողին լուսավորչական-ազատական գաղափարների ազդեցությունից:

4. Ի հակադրություն ազատական-բուրժուական մտավորականների, որոնք ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ իրականության մեջ Արևմտյան

Հայաստանի ազատագրման հույսերը կապում էին ցարիզմի՝ դեպի Թուրքիա կատարած ռազմական միջամտության հաջողության հետ, Մամուրյանը պաշտպանում էր Նալբանդյանի գիծը: Նա Հայաստանի ազատագրումը տեսնում էր ռուսական հեղափոխության հաղթանակի, ցարիզմի տապալման, նոր ժողովրդական կարգեր ստեղծելու հեռանկարի մեջ:

5. XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում կատարվեցին խոշոր իրադարձություններ իրավաքաղաքական և հոգևոր կյանքի այլ ոլորտներում: Եվրոպայից թափանցած լուսավորչական շարժումը, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, Թուրքիայի տնտեսական և քաղաքական կացությունը հայ մտավորականության առջև խնդիր էին դրել ծրագիր մշակել ազգի գոյապահպանման և զարգացման համար: Այդ ծրագիրը եղավ արևմտահայերի Սահմանադրությունը (կանոնադրությունը), որը ձեռք բերվեց պայքարի միջոցով: Կանոնադրության հեղինակները դրանում ամրագրել էին ժամանակի իրավաքաղաքական առաջավոր գաղափարները և ազգի առջև ծառայած խնդիրները փորձել էին լուծել օրենք ունենալու ճանապարհով: Պատմական կոնկրետ ժամանակաշրջանում հարցի նման լուծումը քաղաքակիրթ էր, օբյեկտիվ և արդարացված:

6. Սույն հետազոտության հեղինակը, ներկայացնելով գրականության մեջ եղած վեճերը 1860 թ. արևմտահայերի կանոնադրությունը «սահմանադրություն», թե «կանոնադրություն» անվանելու, նշված փաստաթղթի հիմնադրների կողմից այդ հասկացություններն իրարից չսահմանազատելու, կանոնադրությունը եվրոպական մտքի արդյունք համարելու հարցերի շուրջ, եզրակացնում է, որ իրավաբանական տեսանկյունից քննարկվող փաստաթուղթը ֆորմալ առումով կանոնադրություն-օրենք է, իսկ իր նշանակությամբ և բովանդակությամբ՝ սահմանադրություն:

7. Արևմտահայոց «սահմանադրության» մշակման գործընթացը խթանեց պետաիրավական, ներառյալ սահմանադրական մտքի զարգացումը: Ձևավորվեց հայ աշխարհիկ պետականագիտությունը (սահմանադրական միտքը), որն այս շրջանում քննարկել է պետության առաջացման հարցերը՝ աստվածաբանական,

պայմանագրային, մարքսիստական, բռնության տեսությունների դիրքերից, պետության հասկացությունը, էությունը և առանձնահատկությունները: Հայ մտածողների հայացքներում հատուկ տեղ են գրավում պետության կառավարման ձևի հասկացության և տեսակների, պետական իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման հիմնահարցերը: Ընդ որում կային հայ մտածողներ, ովքեր կանգնած էին պետական նիհիլիզմի՝ անարխիզմի դիրքերում:

8. Քաղաքական անկախության բացակայության պայմաններում նոր ձևավորվող հայ իրավագիտությունն՝ ի դեմս XIX դարի հայ մտածողների արժարծել է իրավունքի ընդհանուր տեսության հիմնական հարցերը, իր տեսակետներն է արտահայտել գերիշխող տերություններում հասարակական հրատապ իրավական հիմնախնդիրների վերաբերյալ: Քննարկված հիմնահարցերից են՝ բնական և դրական իրավունքի հարաբերակցությունը, դրական իրավունքի առաջացումը, հասկացությունը, դրական իրավունքի ներհամակարգային տարրերը, միջազգային իրավունքի հասկացությունը, համակարգը, աղբյուրները և այլն:

9. Առաջավոր հայ մտածողների պաշտպանած գաղափարները ոչ միայն համահունչ չէին կրոնական գաղափարների հետ, այլ լրիվ հակադիր էին վերջինիս: Նրանք չժխտելով Աստծո գոյությունը, այնուամենայիվ անփոփոխ աստվածային կեցության փոխարեն հայ իրականության մեջ սկսեցին տարածել անփոփոխ բնության գաղափարը: Այդ մտածողները, դեիզմի դիրքերից պաշտպանել են բնական իրավունքի տեսությունը, վկայելով, որ մարդիկ բնությունից ծնվում են ազատ և հավասար բնական իրավունքներով, որոնք էլ պետք է հանդիսանան պետության կողմից սահմանված գրավոր օրենքների հիմքը: Ընդ որում իրավունքի գաղափարը անբաժանելի է պարտքի գաղափարից, մարդկանց կողմից միմյանց իրավունքների ճանաչումը միաժամանակ այլ բան չի նշանակում, եթե ոչ իրար նկատմամբ փոխադարձ պարտականությունների կրումը:

10. XIX դարի հայ մտածողներն իրարամերժ հայացքներով վերլուծել են ժամանակի իրավունքի էությունը, դրա դասակարգային ու սոցիալական բնույթը, խնդիրները: Նրանցից մեծ մասի քաղաքական-իրավական հայացքների հիմքում

ընկած էր բնական իրավունքի գաղափարը: Մարդու աստվածային, բնական հատկությունները հանդիսանում են բնական իրավունքի հիմք, բնական իրավունքը՝ որպես օրենսդրության (դրական իրավունքի) հենարան և կատարելագործման գործիք, օրենքը՝ պետության հիմնաքար՝ սա է, ըստ XIX դարի հայ մտածողների, անկախ պետության այն ձևաչափը, որին լուսավորման, միավորման, պայքարի միջոցով պետք է ձգտի հայ ժողովուրդը:

11. Հայ լուսավորիչները հռչակելով մարդու ազատ և հավասար լինելու ազատական սկզբունքները, գաղափարապես պատրաստեցին կղերականության, ազգային ճնշման ու հասարակական կյանքի այլևայլ անարդարությունների դեմ պայքարը և մեծ հետք թողեցին ազգային-ազատագրական պայքարի հետագա զարգացման վրա:

12. Հայ մտածողները, դեռևս XIX դարում, առաջադիմական հայացքներ են արտահատել իրավունքի, դրա էության, իրավունքի առանձին ճյուղերի, մասնավորապես ընտրական և միջազգային իրավունքի մասին, որով իրենց համեստ ներդրում են կատարել համաշխարհային իրավական մտքի զարգացման գործում: Հատկապես մեծ էր նրանց ներդրումը ընտրական իրավունքի տեսության մշակման գործում: Արևմտահայության սահմանադրությունում (կանոնադրությունում) ընտրական իրավունքը ազգային ընդհանուր ժողովի կողմից սահմանված և օսմանյան իշխանությունների կողմից սանկցիայի ենթարկված վարքագծի պարտադիր կանոնների ամբողջությունն էր թուրքական կայսրության հայկական համայնքներում ընտրական հարաբերությունները կարգավորելու համար: Կանոնադրության նորմերով ընտրությունը ընդհանուր էր, հավասար, ուղղակի և գաղտնի: Անհրաժեշտ է նկատել, որ կանոնադրությամբ կանայք ունեցել են ընտրական իրավունքներ: Դրանով հայ իրականությունը մի քանի տասնյամակով առաջ էր իր ժամանակաշրջանի մի շարք պետությունների իրավակարգավորումներից:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

ա) Մենագրություններ

1. Հովսեփյան Նելլի, Պետաիրավական հարցադրումները XIX դարի հայ հեղինակների հասարակական-քաղաքական հայացքներում: Երևան, Միվա-պրես, 2022, 206 էջ:

2. Հովսեփյան Նելլի, Հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի հիմնական հոսանքները և հայ իրավունքին պատմագրության սկզբնավորումը XIX դարի երկրորդ կեսին: Երևան-2016, 52 էջ:

բ) Գիտական հոդվածներ

3. Հովսեփյան Նելլի, Հայ մտածողների հայացքները միջազգային իրավունքի մասին 19-րդ դարի 2-րդ կեսում// Իրավագիտության հարցեր, №3-4, Երևան, 2000, էջ 151-155:

4. Հովսեփյան Նելլի, Արսեն Բագրատյանը բնական իրավունքի մասին// «Պետություն և իրավունք», Թիվ 2-3 (20-21), Երևան, 2003, էջ 66-71.

5. Հովսեփյան Նելլի, XIX դարի հայ մտածողների հայացքները բնական իրավունքի մասին// «Արդարադատություն», Մարտ, №1, (24), Երևան, 2014, էջ 28-38:

6. Հովսեփյան Նելլի, XIX դարի հայ մտածողները պետության առաջացման մասին// «Դատական իշխանություն», №2-3/200-201, Երևան, 2016, էջ 20-27:

7. Հովսեփյան Նելլի, XIX դարի հայ մտածողների հայացքները պետական կառավարման ձևի մասին// «Պետության և իրավունք», №1 (71), Երևան, 2016, էջ 42-51:

Овсебян Нелли Давидовна

Проблемы государства и права в политико-правовых учениях армянских мыслителей XIX века.

Резюме

Диссертационное исследование посвящено одной из малоразработанных областей национальной правовой мысли.

Актуальность данной темы обусловлена возрастающей ролью политико-правовых учений в становлении и развитии национального правосознания в современных сложных условиях.

Исследование истории политико-правовых взглядов армянских мыслителей XIX века связано со многими трудностями, требует решения ряда методологических и методических проблем. К таковым, в частности, относятся методы и критерии отбора материала, методы включения соответствующих армянских мыслителей в политико-юридическое наследие XIX века.

При этом, часто бывает весьма трудно структурировать и классифицировать подобранный материал, следовать строгим принципам в изложении политико-правового учения соответствующего мыслителя.

Данная диссертационная работа написана преимущественно на основе изучения первоисточников, а также соответствующей научной и учебной литературы. Изложение дается преимущественно портретным способом, а при необходимости используется также принцип проблемного освещения.

Научная новизна данной диссертации заключается, в том, что формирование и развитие армянской политико-правовой мысли XIX века освещено с позиций новой методологической концепции, благодаря чему многие политические процессы, правовые учения и концепции армянских мыслителей получили в работе новое осмысление и интерпретацию. Показано, что армянские мыслители XIX века рассматривали проблемы государства и права в качестве стартового ресурса

нации, важнейшего инструмента сохранения национальной идентичности как залога единства и сохранение нации.

В диссертации осязаны также проблемы, относящиеся к сфере политической и правовой культуры, основой которой являлась политическая и правовая мысль.

Развитие армянской политико-правовой мысли изложено в контексте западноевропейской, что дает возможность более адекватно оценить достижения национальной правовой мысли.

В диссертационной работе, в частности, анализируются работы ряда авторов (например-В.Бастамянц, М. Мамурян, Р. Перперян, А. Меликян и др.), ранее не становившие предметом юридического анализа.

Исходя из выявленных и обоснованных и различий в позициях армянских мыслителей, указанного периода, в отношении политико-правовых явлений, в армянской истории юриспруденции XIX века, диссертант выделяет три направления: религиозное (консервативное), светское (просветительское) и революционно-демократическое.

Вместе с тем, в диссертации утверждается, что проблемы государства и права в армянской политико-правовой мысли XIX века, характеризующиеся как опыт выявления основных вех творческого развития юриспруденции и политологии, могут быть исследованы и адекватно оценены лишь на основе взаимодополняемости указанных трех направлений.

Отмеченные особенности политико-правовой мысли армянских мыслителей XIX века, выводятся диссертантом в следующих вопросах идей общественного прогресса, национального государства и формы государственного правления.

Материалы диссертации могут способствовать дальнейшей разработке концептуальных проблем политико-правовых учений в истории развития армянского народа.

Высказанные автором положения могут быть полезными для уточнения не только доктринального, но и практико-прикладного понимания сущности и содержания национального государства в современных условиях.

Автор считает, что данная проблема исключительно многогранна. Она может быть решена лишь совместными усилиями не только правоведов, но и историков, политологов, философов.

Hovsepyan Nelli

**Problems of State and Law in the Political and Legal Doctrines of Armenian
thinkers of the 19th Century**

SUMMARY

The relevance of the study of this topic is due to the growing role of political and legal doctrines in the formation and development of national legal consciousness in today's difficult conditions. The study of the history of the political and legal views of the Armenian thinkers of the 19th century is associated with many difficulties and requires the solution of a number of methodological and methodological problems. These, in particular, include methods and criteria for selecting material, methods for including the relevant Armenian thinkers in the political and legal heritage of the 19th century: At the same time, it is often very difficult to structure and classify the selected material, to follow strict principles in the presentation of the political and legal doctrine of the corresponding thinker. This dissertation work is written mainly on the basis of the study of primary sources, as well as relevant scientific and educational literature. The presentation is given mainly in a portrait way, and, if necessary, the principle of problematic lighting is also used. Scientific novelty Firstly: the formulation in the title of the dissertation of the problem in the Armenian political history - alleged thoughts (as well as in Armenian studies) Secondly, in the light of new worldview and methodological guidelines and on the basis of a sufficiently updated factual base. In the dissertation work, in particular, the works of a number of authors (for example, V. Bastamyats, M. Mamuryan, R. Perperyan, A. Melikyan, etc.) are analyzed, which have not previously become the subject of legal analysis. Based on the differences in the positions of Armenian thinkers of the specified period regarding the political and legal phenomena in the Armenian history of jurisprudence of the 19th century, which he identified and substantiated, the dissertation identifies three areas: religious (conservative), secular (enlightenment) and revolutionary democratic. At the same time, the dissertation states that the problems of state and law in the Armenian political and legal

thought of the specified period in relation to the political and legal phenomena in the Armenian history of jurisprudence of the XIX century, characterized by the development of jurisprudence and political science, can be investigated and adequately assessed only on the basis of the complementarity of these three directions. The noted features of the political and legal thought of the Armenian thinkers of the 19th century are derived by the dissertator of the following questions -the ideas of social progress and the national state of the form of state government, their understanding of the political, socio-economic and spiritual factors of the preservation and development of the nation. The materials of the dissertation can contribute to the further development of the conceptual problems of political and legal teachings in the history of the development of the Armenian people.



